

# LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի

**ՏԵՂԵԿԱԳԻՐ # 2**  
*Հունիս-օգոստոս 2012թ.*



**USAID**  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



**Save the Children**

LIFE ծրագիրը (2012-2015) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիտոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և զբաղվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

## Այս համարում կարդացեք՝

- *Գործատուների հետ հանդիպումներ Գյումրիում և Գեղարքունիքում*
- *Մեր գործընկերն է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը*
- *«Ունիտոնի» 10 տարվա գործունեությունը՝ հանուն հավասար հնարավորությունների*
- *«Աշխատանքի պատրաստվածություն և կյանքի հմտություններ» դասընթացներ հաշմանդամություն ունեցող անձանց համար*
- *«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանություն, թե՛ սոցիալական ներառում: Քայլ առաջ, թե՛ ...» համաժողովը*
- *2012-2013 ուս. տարվա ընդունելությանն ընդառաջ*
- *Մի հաջողության պատմություն*
- *Ջերմոցային տնտեսությունը կրնձեռի 20 նոր աշխատատեղերի հնարավորություն*





Հուլիս ամսվա ընթացքում HDP հիմնադրամը Գյումրիում և Աշոցքում, իսկ «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությունը՝ Գավառ քաղաքում, անցկացրեցին հաշմանդամների զբաղվածությունը նվիրված հանդիպումներ գործատուների հետ: Հանդիպումների նպատակն էր վերհանել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, աշխատաշուկայում ինտեգրման հիմնախնդիրները, հատկապես նրանք, որոնք խոչընդոտ են հանդիսանում գործատուների համար՝ հաշմանդամներին որպես կարող աշխատուժ դիտարկելու հարցում:

Նախաձեռնությունը միտված էր նաև բարձրացնել գործատուների իրազեկությունը զբաղվածության ոլորտում իրականացվող ծրագրերի վերաբերյալ և նպաստել հաշմանդամների նկատմամբ ոչ-խտրական վերաբերմունքի ձևավորմանը:

Հանդիպմանը մասնակցում էին տարբեր ոլորտներ ներկայացնող գործատուներ, Առևտրաարդյունաբերական պալատի մարզային ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀԿ-ների ու զբաղվածության կենտրոնների աշխատակիցներ:

Գավառում կայացած հանդիպմանը գործատուներից շատերը նշեցին, որ տեղեկացված չեն հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանն ուղղված պետական ծրագրերին: Բացի այդ, նրանք նաև խոստովանեցին, որ հարկային չափազանց անբարենպաստ դաշտի և որոշ պաշտոնյաների կամայականությունների պատճառով ստիպված են կրճատումներ իրականացնել, ուստի գործատուները աշխատանքի չեն կարող ընդունել ինչպես

հաշմանդամություն ունեցող, այնպես էլ չունեցող անձանց:

Գյումրու զբաղվածության կենտրոնի տնօրեն Ամալյա Ադամյանն ավելի լավատեսական պատկեր ներկայացրեց.

«Ներկա հասարակությունում առկա է մեծ առաջընթաց՝ հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ վերաբերմունքի առումով: Նախ, շատ հաշմանդամություն ունեցող անձինք ակտիվ գործունեություն են ծավալում և կարծրատիրապետ են կոտրում: Իսկ մյուս կողմից էլ շատ գործատուներ պատրաստակամ են ունենալ հաշմանդամ աշխատակիցներ՝ համապատասխան մասնագիտության և հմտությունների առկայության դեպքում»:

Մարգարյին քննարկումներից պարզ դարձավ, որ հաշմանդամ երիտասարդները մասնագիտական կողմնորոշման և կրթվելու կարիք ունեն, ինչն էլ կհեշտացնի նրանց մուտքն աշխատաշուկա: LIFE ծրագրի շրջանակներում նախատեսվում է աշխատանք քոլեջների հետ՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդներին մասնագիտական կողմնորոշում տրամադրելու և աշխատաշուկա ընդգրկելու նպատակով:

Հանդիպումների ժամանակ հնչեցին տարբեր առաջարկներ, որոնցից էին, օրինակ՝ ստեղծել հարկային շոշափելի արտոնություններ հաշմանդամներին աշխատանքի ընդունման պարագայում, հրապարակել և գործատուների շրջանում տարածել հաշմանդամների զբաղվածությանն ուղղված պետական ծրագրերի մասին տեղեկատվական բուկլետներ: Իսկ Գավառի գործարարներից մեկը պատրաստակամություն հայտնեց մշակել զարդերի արտադրության հետ կապված մի բիզնես-ծրագիր, որում ներգրավված կլինեն նաև հաշմանդամություն ունեցող անձինք:



**LIFE ՕՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՑ Է** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը (ԶՊԾԳ): Համագործակցությունը ենթադրում է ԶՊԾԳ աշխատակիցների, տասը ավագ վերապատրաստողների և զբաղվածության մարզային կենտրոնների 58 ներկայացուցիչների վերապատրաստում, աշխատանքի տոնավաճառների համատեղ կազմակերպում և մի շարք այլ նախաձեռնություններ ուղղված ՀՈՒԱ զբաղվածությունը խթանելուն:



*«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առանձնացված ստորաբաժանում է, որի խնդիրը զբաղվածության կարգավորման պետական քաղաքականության իրականացումն է:*

*Գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, գործակալության կանոնադրության և օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի շրջանակներում:*

*Գործակալության հիմնական խնդիրը զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացումն է, որոնք ուղղված են բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը:*

*Հիմնական գործառնություններն են.*

- *աշխատանք փնտրող անձին խորհրդատվության տրամադրում և հաշվառում,*
- *աջակցություն աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման, իսկ գործատուներին՝ անհրաժեշտ մասնագիտություն և որակավորում ունեցող անձանցով ապահովելու հարցում,*
- *զբաղվածության տարածքային և հանրապետական ծրագրերի իրականացում,*
- *աշխատաշուկայում անմրցունակ խմբերին ուղղված զբաղվածության ծրագրերի իրականացում, և*
- *աշխատաշուկայի վերլուծություն և կանխատեսում են:*

*Մանրամասների համար կարող եք այցելել <http://employment.am>*

Ծրագրին կմասնակցեն Երևանի և Արարատի, Գեղարքունիքի, Լոռու ու Շիրակի մարզերի 29 զբաղվածության կենտրոնները: 29 զբաղվածության կենտրոններից չորսը կլինեն Արարատի, Գավառի, Վանաձորի և Գյումրիի մարզային կենտրոնները: Ծրագրի գործընկերներ հասարական կազմակերպությունները աշխատանքներ կտանեն համայնքների/զբաղվածության կենտրոնների հետ՝ համաձայն հետևյալ բաշխվածության.

- **ԷՅԶ-ԴԻ-ՓԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ – Երևան, Արարատի և Շիրակի մարզեր**
- **«ՈՒՆԻՍՈՆ» ՀԿ - Երևան և Սպիտակ քաղաքներ**
- **«ԼԻԱՐՇԵՔ ԿՅԱՆՔ» ՀԿ- Լոռու և Գեղարքունիքի մարզեր**



**LIFE ծրագրի գործընկերները մաղթում են «Ունիսոնին» բեղմնավոր աշխատանք  
և նորանոր հաջողություններ հաշմանդամների իրավունքների պաշտպանության ոլորտում**



«Ունիսոնը» 10 տարեկան է. անհավատալիորեն արագ անցան այս տարիները: Կարծես երեկ էր ծագել գաղափար ստեղծել մի կազմակերպություն, որը կունենա հաշմանդամություն ունեցող մարդկանց սատար կանգնելու առաքելությունը:

Իսկ այսօր կազմակերպության «հարուստ ժառանգությունն են» կազմում հաշմանդամների համար մատչելիության, կրթության, մշակութային ներգրավվածության, զբաղվածության ոլորտին առնչվող մի քանի տասնյակ իրականացված ծրագրերը, ձեռքբերումները, հարուստ գործընկերությունը և բազմաթիվ շահառուները:

Հոբելյանական տոնակատարությունը, որը տեղի ունեցավ հուլիսի 4-ին «Էրեբունի-պլազա» բիզնես-կենտրոնում, անցավ բարեկամական և ջերմ մթնոլորտում:

«Ունիսոնի» հյուրերի կազմում էին ՀԿ-ի աջակիցները՝ այդ թվում գլխավոր հովանավոր պ-ն Ռոջեր Շտրաուխը, պետմարմիններն ու ՀԿ սեկտորը ներկայացնող գործընկերները, հաջողության պատմությունների հերոսները, ՀԿ-ի կողմից անցկացված մրցույթների հաղթողները, նախկին աշխատակիցները և պարզապես

համախոհները: Բարեմաղթանքներով և հետագա արդյունավետ համագործակցության ակնկալիքներով հանդես եկան Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար տկն. Ջեմմա Բադդասարյանը, Հայկական Կարմիր Խաչի ընկերության նախագահ պ-ն Մխիթար Մնացականյանը, Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության պետ Ռուզաննա Զաքարյանը, և այլք:



«Ունիսոն»-ի հասցեին հնչեցին ոչ միայն պաշտոնական ողջույններ: Երաժշտական համարներով շնորհավորանքներին միացավ «Փարոս» կամերային երգչախումբը, իսկ տիկնիկ «սինյոր Ունիսոնը» և հայտնի աճպարար Արայիկը տեղափոխեցին հյուրերին հեքիաթային աշխարհ՝ ստիպելով բոլորին հավատալ հրաշքներին: Միջոցառման ավարտին ներկաներին մատուցվեց ևս մեկ անակնկալ՝ խաղ «Ունիսոնի» մասին, որի հաղթողները դրսևորեցին իրենց փայլուն տեղեկացվածությունը ՀԿ-ի մասին և համապատասխանաբար պարզևատրվեցին նվերներով: Այսպիսի ուրախ և աշխույժ տրամադրության ներքո անցավ «Ունիսոնի» 10-ամյա տարեդարձին նվիրված տոնակատարությունը:

*Հեղ.՝ Մարիանա Զալիկյան*

## «Աշխատանքի պատրաստվածության և կյանքի հմտություններ» դասընթացներ



Աշխատունակ տարիքում գտնվող հաշմանդամների 92%-ը աշխատանք չունի: Որպես պատճառ առաջ են բերվում տարբեր գործոններ. թափուր աշխատատեղերի բացակայություն Հայաստանում, գործատուների մոտ արմատացած կարծրատիպեր հաշմանդամի անաշխատունակության մասին, միջավայրի անմատչելիություն, և այլն:


Սակայն, ուսումնասիրելով ներկայիս աշխատաշուկան, գալիս ենք այն եզրակացության, որ աշխատատեղերը այնքան էլ սակավաթիվ չեն, գործատուներից մի մասը արդեն որդեգրել է ոչ-խտրական վերաբերմունքի մասին քաղաքականությունը, իսկ տվյալ սոցիալական խմբի զբաղվածության աճը միևնույն է տեղի է ունենում չափազանց դանդաղ տեմպերով:

Բայց ՀՈՒԱ-ներից շատերն իրենք դեռ պատրաստ չեն աշխատաշուկա մտնելուն և առաջարկել իրենց ներուժը գործատուներին: Այսպես, հիմնական խոչընդոտների թվում կարելի է նշել ՀՈՒԱ կրթական բացերը, գործատուին դիմելու ընթացակարգին ծանոթ չլինելը, և, ամենակարևորը, հարազատների գերխնամքի տակ գտնվելը:

LIFE ծրագրի բաղկացուցիչ մասն է կազմում վերոնշյալ խոչընդոտների վերացմանն ուղղված դասընթացների անցկացումը: Պատահական չէ, որ այս դասընթացը կրում է «Աշխատանքի պատրաստվածություն և կյանքի հմտություններ» անվանումը: Այն նախապատրաստում է աշխատանք փնտրող հաշմանդամներին, ինչպես տվյալ գործընթացի բոլոր փուլերին, այնպես էլ օգնում է մասնագիտական առումով ճիշտ կողմնորոշվել և, ամենակարևորը, լինել

ինքնուրույն: «Ունիտոն» հասարակական կազմակերպության կողմից նախաձեռնած դասընթացներին ինքնուրույնության գաղափարը կարմիր թելով անցնում է բոլոր բաժիններով: Թե՛ գրույցների, թե՛ տեսանյութերի ցուցադրման, և թե՛ գործնական վարժությունների միջոցով մասնակիցներին փոխանցվում է այն մոտեցումը, որ պետք է ճիշտ գնահատել սեփական հնարավորությունները՝ մշտապես ձգտելով նորանոր հնարավորությունների բացահայտմանը և զարգացմանը, լինել նախաձեռնող և անկախ որոշումներ կայացնելու հարցում և, անշուշտ, հարգանք առաջացնել սեփական անձի հանդեպ՝ ինչպես մասնագիտական առումով, այնպես էլ արժանապատիվ պահվածքով: Դասընթացների ընփացքում հաղորդում են նաև համակարգչային որոշ գիտելիքներ, որոնք 21-րդ դարում անհրաժեշտ գործիք են աշխատանքի որոնման գործընթացում: Ի դեպ, հատուկ համակարգչային ծրագրի ուսուցումը նոր հեռանկարներ է բացում նաև աշխատանք փնտրող կույր անձանց համար:

Դասընթացների արդյունավետության մասին վկայում է այն փաստը, որ դրանց ավարտից հետո «շահառու-ՀԿ» կապը շարունակական բնույթ է կրում: Ի դեպ, «Ունիտոնի» մեթոդաբանությամբ առաջնորդվեցին նաև ծրագրի գործընկերները՝ «Էյջ-Դի-Փի» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները իրենց կողմից Գյումրիում, Մարալիկում, Աշոցքում, Ստեփանավանում, Վանաձորում և Տաշիրում կազմակերպած նմանատիպ դասընթացների ժամանակ: Ընդհանուր առմամբ, ծրագրի մեկնարկից մինչ օրս Հայաստանի ողջ տարածքում նման դասընթացի են մասնակցել շուրջ 140 հաշմանդամ:



**«Հաշմանդամություն ունեցող անձանց  
սոցիալական պաշտպանություն, թե՛ սոցիալական ներառում:  
Քայլ առաջ, թե՛ ...» համաժողովը**

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Ամեն ինչ մեզ համար՝ մեզ հետ» ծրագրի շրջանակներում «Լիարժեք կյանք» ՀԿ-ն, հունիսի 29–30-ը հրավիրել էր «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանություն, թե՛ սոցիալական ներառում: Քայլ առաջ, թե՛ ...» խորագրով համաժողովը: «Ամեն ինչ մեզ համար՝ մեզ հետ» ծրագիրը իրականացվում է Լոռու, Արագածոտնի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի 19 քաղաքային համայնքներում՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, և «Լուսաստղ», «Փարոս», «Աստղացույց», «Թալին-Հույս» ՀԿ-ների հետ համագործակցությամբ: Համաժողովի մասնակիցների թվում էին ՀՀ կառավարության և ԱԺ ներկայացուցիչներ, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության պաշտոնատար անձինք, ՀՈՒԱ հիմնախնդիրներով զբաղվող ազգային հանձնաժողովի և շահերի պաշտպանության ազգային դաշինքի անդամներ, տարածքային և տեղական կառավարման, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, տեղական և միջազգային կազմակերպությունների, մարզային քաղաքացիական ակտիվության խմբերի, ՀԿ-ների, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ:

Համաժողովը նպատակ ուներ վեր հանել այն խնդիրներն ու մարտահրավերները, որ առկա են 2010թ-ի հոկտեմբերի 22-ից մեր երկրում ուժի մեջ մտած «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վավերացումից ի վեր, քննարկելու՝ այն քայլերը, որ ձեռնարկվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում հավասար հնարավորությունների ստեղծման, ՀՈՒԱ իրավունքների պաշտպանության ու մատչելի միջավայրի ապահովման ուղղությամբ: ՀՈՒԱ միջազգային ցանցի եվրոպական տարածաշրջանային կազմակերպության նախագահ Ժան-Լյուկ Սիմոնը ներկայացրեց հավասար հնարավորությունների ստեղծման և ներառման Եվրոպական փորձը:

Կառավարական օղակների ներկայացուցիչները խոսեցին հավասար հնարավորությունների ստեղծմանը և սոցիալական ներառմանն ուղղված հայաստանյան քաղաքականությունից, առկա իրավիճակից և մարտահրավերներից: «Ամեն ինչ մեզ համար՝ մեզ հետ» ծրագրի թիմի անդամները հրապարակեցին երեք վերլուծություն-հաշվետվությունները «ՀՈՒԱ վերաբերող ՀՀ օրենսդրական դաշտ», «ՀՀ-ում ՀՈՒԱ իրավական վիճակը, մատչելիության և զբաղվածության ապահովումը», «ՀՈՒԱ կարիքների ուսումնասիրություն Լոռու, Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում»:

Եղան նաև զեկույցներ ներկայումս ՀՀ-ում իրականացվող ծրագրերի մասին: Համաժողովի ընթացքում ձևավորվեցին 5 աշխատանքային խմբեր հետևյալ ոլորտներում՝ ՏԻՄ ներգրավում և համագործակցություն, գործատուների ներգրավում և սոցիալական գործընկերություն, մասնագիտական կրթություն, հանրային քաղաքականության բարելավում և իրազեկում, հայտարարվելիք փոքր դրամաշնորհների առաջնահերթություններ և չափորոշիչներ: Հնչեցված մտքերի և առաջարկների հիման վրա կկազմվի օրենսդրական փոփոխությունների միասնական փաթեթ, որ կներկայացվի ՀՀ Կառավարությանը:

Հեղ.՝ Լուսինե Սարգսյան  
«Լիարժեք կյանք» ՀԿ





«Մեյվ դը չիլդրեն»-ի կողմից իրականացվող LIFE և «Միավորվենք հանուն երեխաների փրկենք ապագան» ծրագրերի համագործակցությամբ և LIFE ծրագրի գործընկեր՝ HDP Հիմնադրամ, «Լիարժեք կյանք» և «Ունիսոն» ՀԿ-ների մասնակցությամբ մի շարք մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ անցկացվեցին Գյումրիում (օգոստոսի 2-ին), Գավառում (օգոստոսի 3-ին), Վանաձորում (օգոստոսի 6-ին), Արտաշատում (օգոստոսի 14-ին) և Երևանում (օգոստոսի 18-ին):

Հանդիպումներին մասնակցեցին մոտ 135 հաշմանդամություն ունեցող երիտասարդներ՝ գիշերօթիկ և հատուկ դպրոցների շրջանավարտներ և գործընկեր կազմակերպությունների շահառուներ, ինչպես նաև նրանց ծնողները, հատուկ դպրոցների ուսուցիչները, մասնագիտական ուսուցման հաստատությունների և զբաղվածության կենտրոնների ներկայացուցիչները:

Հանդիպումների հիմնական նպատակն էր՝ քննարկել հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը ընդհանուր մասնագիտական կրթության մեջ և ստեղծել կամուրջ վերոհիշյալ թիրախային խմբերի միջև աջակցելու համար հաշմանդամություն ունեցող երիտասարդների անցումը գիշերօթիկ/ներառական դպրոցներից դեպի մասնագիտական կրթություն և աշխատաշուկա:

Հանդիպումների ընթացքում քննարկված հարցերի թվում էին՝

- Հաշմանդամություն ունեցող երիտասարդների (ՀՈՒԵ) կրթությունը մասնագիտական ուսուցման հաստատություններում շարունակելու և աշխատաշուկա մտնելու կարևորությունը:

- Մասնագիտական կրթության հեռանկարները և աշխատաշուկայում ինտեգրվելու կարևորությունը (առողջապահական, սոցիալական, հոգեբանական, տնտեսական և այլ ասպեկտները):
- Պետության կողմից ֆինանսավորվող կրթական հնարավորությունները առաջին և երկրորդ խմբի հաշմանդամների և հաշմանդամ երեխաների համար, ինչպես նաև պետական աշխատանքային ծառայությունները:
- ՀՈՒԵ և մասնագիտական կրթական հաստատությունների միջև ամուր գործընկերության ստեղծում:
- Ծանոթացում առաջարկվող մասնագիտությունների և կրթական պայմանների հետ, ինչպես նաև տվյալ կրթական հաստատությունների կողմից ՀՈՒԵ իրենց ընթացիք ծրագրերում ներառելու պատրաստականություն:



Հանդիպումները անցկացվեցին բաց քննարկման եղանակով, որտեղ յուրաքանչյուր մասնակից կարող էր հարցեր տալ, կարծիք հայտնել կամ հանդես գալ առաջարկով, թե ինչպես կարելի է հաշմանդամություն ունեցող երիտասարդների անցումը դեպի մասնագիտական կրթություն և աշխատաշուկա ավելի սահուն դարձնել:

Մասնակիցների մեծ մասը ցանկություն և պատրաստականություն է հայտնել շարունակել կրթությունը, և LIFE ծրագրի տվյալներով, օգոստոսի 31-ի դրությամբ, մոտ 40 ՀՈՒԵ ընդունվել են միջին մասնագիտական և ուսումնական հաստատություններ:

## Մի հաջողության պատմություն



Իմ գրույցը Վարդանի հետ կարճ տևեց: Տղան ժլատ էր խոսելու մեջ և հարցերիս շատ հակիրճ էր պատասխանում: Բայց այդքանն էլ բավական էր, հասկանալ, թե որքան էր նա կարևորում իր զբաղվածությունը:

Քսանյութամյա այս երիտասարդը իրենց ընտանիքի միակ տղամարդն է: Հայրն ու եղբայրը անժամանակ կյանքից հեռանալով՝ նրա խնամքին էին թողել տատիկին, մորն ու փոքր քրոջը:

Վարդանը որոշում է աշխատել և առաջին քայլը, որ նա անում է՝ 2010թ-ին գրանցվում է Հրազդանի զբաղվածության մարզային կենտրոնում (ՁՄԿ): Ծանոթանալով ինչպես կենտրոնի, այնպես էլ նույն ժամանակահատվածում «Հյուսան Դիզնիթի Ընդ Փիս» բարեգործական

հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրին, գրանցվում է որպես աշխատանք փնտրող և թեստավորվում MAST համակարգով, որով գնահատում են նրա աշխատանքային կարողությունները: Թեստավորման արդյունքները գոհացուցիչ էին և որոշ ժամանակ անց կենտրոնում առաջարկում են մասնակցել համակարգչային, հետո նաև փայտամշակման դասընթացների: Վարդանը հույս ունենալով, որ այս ամենը կօգնի իրեն աշխատանք գտնել, անմիջապես ընդունում է առաջարկը:

Այնուհետև կենտրոնի աշխատակիցները հայտնում են, որ Հրազդանի Արամազդ ՀԿ-ում կա ցերեկային հսկիչի թափուր աշխատատեղ: Համագործակցելով գործատուի հետ կենտրոնի աշխատակիցների կողմից կատարվում է Վարդանի աշխատատեղի գնահատում և հարմարեցում: Համադրելով անհրաժեշտ տվյալները Վերականգնողական անհատական ծրագրի (ՎԱԾ) տվյալների հետ՝ աշխատանք է առաջարկվում Վարդանին, վերջինս էլ չի մերժում և «Աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» պետական ծրագրով 2012թ-ից սկսում աշխատել:

Իմ այն հարցին, թե ինչ է աշխատանքն իր համար, Վարդանը տվեց շատ հետաքրքիր ու ինձ համար անսպասելի պատասխան.

- Դե մարդ պետք է հաճույք ստանա իր աշխատանքից, ես գոհ եմ իմ գործից, տանից դուրս եմ գալիս, շփվում մարդկանց հետ, տանը լավ չէր:

Աշխատավայրում նրան վերաբերվում են հարգանքով, ու ամենակարևորը նա գումար է վաստակում: Փոքր գումար, բայց ինչ-որ հարցեր դրանով կարողանում են լուծել ընտանիքում:

Վարդանը նաև պատմեց, որ մասնակցել է «Հյուսան Դիզնիթի Ընդ Փիս» բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպված հոգեբանի հետ հանդիպմանը, որը շատ է իրեն օգնել:

Վարդանի օրինակը կարող է ուսանելի լինել բոլոր այն մարդկանց համար, ովքեր սխալմամբ կարծում են, թե կյանքում հաջողության են հասնում միայն ընտրյալները: Յուրաքանչյուր ոք էլ ընտրյալ է, եթե նա ընտրում է հաջողությունը: ՀՈՒԱ-ն ընդգրկվելով LIFE ծրագրում, հնարավորություն է ստանում չափել սեփական ունակությունները և ուղղորդվել դեպի զբաղվածություն, ունենալով իրական հնարավորություն՝ իրացնելու աշխատելու իր իրավունքը:

Հեղ.՝ Ռուզաննա Տեր-Ղազարյան



## Ջերմոցային տնտեսությունը կրնա՞նք 20 նոր աշխատատեղերի հնարավորություն

LIFE ծրագրի շրջանակներում նախատեսվում է ինտեգրված աշխատատեղերի ստեղծումը երկու մոտեցումների կիրառմամբ.

ա. գոյություն ունեցող աշխատատեղերի հարմարեցում, ինչը կիրականացվի այն գործատուների կողմից, որոնք պատրաստակամ են ինտեգրելու և աշխատանքով ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց,

բ. նոր ինտեգրված աշխատատեղերի ստեղծում:

Այս աշխատանքը ենթադրում է սերտ համագործակցություն համայնքային և մունիսիպալ իշխանությունների հետ սոցիալական ձեռնարկությունների ստեղծման գործում: Մույն մոտեցման համար նպաստավոր պայման է հանդիսանում այն հանգամանքը, որ պետական և մարզային կառույցները կլուծեն ապրանքների և ծառայությունների իրացման հարցը, լավ օրինակ կծառայեն ՀՈՒԱ-ների զբաղվածությունը ապահովելու հարցում, և որ ամենակարևորն է, կնպաստեն աշխատանք ունենալու հավասար հնարավորությանների ապահովմանը:

2012թ. Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ կստեղծվի ինտեգրված «սոցիալական» ձեռնարկություն՝ LIFE ծրագիրը կաջակցի Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող 1000քմ. տարածքով ջերմոցի վերանորոգմանը, որտեղ աշխատանք ստացած 20 անձանցից 15-ը կլինեն հաշմանդամություն ունեցող անձինք:

Ձեռնարկության վերանորոգման աշխատանքները կսկսվեն ս.թ. սեպտեմբեր ամսին: Ընտրված մասնագետները ջերմոցային տնտեսությունում աշխատանքի կանցնեն հոկտեմբեր ամսից: Անհրաժեշտության դեպքում քաղաքապետարանի հետ համատեղ «Մեյվ դը չիլդրենը» կկազմակերպի ընտրված անձնաց աշխատանքային պրակտիկան:

## Նախապատրաստվող միջոցառումներ

- Սեպտեմբերի 11-13՝ մասնագիտական ուսուցման հմտությունների զարգացման վերաբերյալ դասընթաց ԶՊԾԳ աշխատակիցների, ավագ վերապատրաստողների և ՀԿ-ների սոցիալական աշխատողների համար: Դասընթացը կվարեն Նիդեռլանդներից ժամանած միջազգային փորձագետները:
- Սեպտեմբերի 27,28՝ Հաշմանդամների զբաղվածության թեմայի վերաբերյալ սոցիալական տեսախոլովակի սցենարի ընտրություն և նկարահանման սկիզբ:
- Հոկտեմբերի 1-4՝ «Դասավարման մեթոդներ և դասընթացների կազմակերպման հմտություններ» դասընթաց ԶՊԾԳ աշխատակիցների, ավագ վերապատրաստողների և ՀԿ-ների սոցիալական աշխատողների համար: Դասընթացը կվարեն Նիդեռլանդներից ժամանած միջազգային փորձագետները
- Հոկտեմբերի 8-10՝ Անհատական մասնագիտական զարգացման և աշխատանքի տեղավորման պլանների զարգացմանն ուղղված դասընթաց ԶՊԾԳ աշխատակիցների, ավագ վերապատրաստողների և ՀԿ-ների սոցիալական աշխատողների համար: Դասընթացը կվարեն Նիդեռլանդներից ժամանած միջազգային փորձագետները:
- Հոկտեմբերի 11-12՝ Դիտորդական մեթոդաբանության դասընթաց (Մաս 2) ԶՊԾԳ 2 ավագ վերապատրաստողների, Գյումրու 2 Զբաղվածության կենտրոնների և Կանանց Ռեսուրսային կենտրոնի 3 աշխատակիցների համար: Դասընթացը կվարի Նիդեռլանդներից ժամանած միջազգային փորձագետը:

- Հոկտեմբերի 24-26՝ Դասընթաց դասընթացավարների համար MAST համակարգի վերաբերյալ ԶՊԾԳ աշխատակիցների, ավագ վերապատրաստողների և ՀԿ-ների սոցիալական աշխատողների համար: Դասընթացը կվարի Նիդեռլանդներից ժամանած միջազգային փորձագետները:

## Ուշադրություն

*Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսարանել հաշմանդամության ունեցող անձանց ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրի օգնական Մարիա Գևորգյանին՝ [Maria.Gevorgyan@savethechildren.org](mailto:Maria.Gevorgyan@savethechildren.org) էլ. հասցեով:*

**LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐ** սույն թողարկումը պատրաստված է «Ունիսոն» ՀԿ-ի կողմից



Սույն տեղեկագիրը պատրաստվել է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներին են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:



**Save the Children**

«Մեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Մեյվ դը չիլդրեն»-ի հայաստանյան ներկայացուցչություն  
 Հասցեն՝ ՀՀ, Երևան 0023, Ազաթանգեղոսի 2ա, 2-րդ հարկ,  
 Հեռ.՝ (010) 56-23-35, ֆաքս՝ (010) 52-07-60  
 Էլ. փոստ՝ [Armenia@savethechildren.org](mailto:Armenia@savethechildren.org)  
 Վեբ կայք՝ [www.savethechildren.net](http://www.savethechildren.net)

